

աասպելաց<sup>1)</sup> Հայոց, զոր վասն Սաթինկան՝ դստեր արքային Ալանաց. Հեծեալ, ասէ, արի արքայն Արտաշէս ի թուխն չքնաղ եւ հանեալ զոսկիօղ շիկափոկ պարանն՝ անցանէր որպէս զարծուի սրաթեւ ընդ վէտս, եւ ձգեալ զոսկիօղ շիկափոկ ներդերն ընկէց ի մէջ օրիորդին<sup>2)</sup> Ալանաց եւ խիստ ցաւեցոյց զմէջս փափուկ գեղեցկին, եւ զայն ի փիւրն հարցիր, ասէ խելօք զրօղն պարզատուժարին. բաւ է:

ԺԳ. — Այս Հուսէին աղայ վասն սիրոյ արքային յանդգնեալ անիրաւի միշտ առ վաճառականն վասն մաքսին, եւ մանաւանդ առ Ֆռանկոս. եւ արդ կացեալ ընդ նոսա յատենի՝ պահանջէր զայնքան անցեալ ամացն զմաքս մետաքսիցն, որոց ոչ է օրէն տալ, որ գրի յամենայն ահտնամէս զուայաց, որ ի ձեռս դեսպանացն, որպէս եւ ընդ կանգնիլն Ֆիլամէնկին թարգմանաւ էլչուռն, ասէ վէզիրն. Դուք եւս եղէք<sup>3)</sup> թէլպիս: Ֆիլամէնկն պատասխանէ. Ի մեզ ոչ գոյ թէլպիսու թիւն, մի՞թէ ձեզ գոյ: Զայրացեալ վէզիրին ասէ. Մինչեւ ցարդ ասէր զա թէ Թուրքերէն չգիտեմ, արդ զսիթէմն ո՞րպէս հասկացաւ եւ ետ զպատասխանին. եւ հրամայեաց երկու հարիւր փայտս հարուլ յտից նորա: Սոյնպէս եւ զանուանի վաճառական ոմն զինկլիդ ի դատ մատնեալ կեօմրուկձուռն, որում հրամայեաց հատուցանել զմաքսն եօթն ամաց հարիւր ութսուն քսակ եւ երեսուն քսակ եւս ըէֆթի եւ զնել յարգելարանի: Պատասխանէ էլչին. Իմ է ուսյայս եւ ինձ է օրէն արգելուլ զգա: Եւ հարեալ զէլչին՝ յետս քաչն ի ձեռաց զվաճառականն եւ տան յարգելանս ի տուն չաւուչի միոյ ի հասարակն եօնարի: Եւ Ֆրանցիսն եւս կայ խոտոռութեամբ, եւ կասկածիմ թէ զալիօնք նոցուն իբրեւ վեշտասան կամ քսան հպեցան

1) առասպելաց.

2) օրիորդին.

3) եղիք.